ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2190-Ա/2 «29» Նոյեմբերի 2022 թ.

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա», «գ» և «ժ.1» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) 2023 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի կանոնակարգը՝ համաձայն հավելված № 1-ի,

2) 2023 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված № 2-ի:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

11/29/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված № 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի նոյեմբերի 29 -ի
№ 2490 -Ա/2 հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2023 թվականին անցկացվող խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի (այսուհետ՝ Մրցաշար) նպատակն է՝

1) Հանրապետությունում հեծանվային սպորտի և առողջ ապրելակերպի մասսայականացում,

2) բնակչության շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում,

3) հեծանվային սպորտի դերի բարձրացում, «Հեծանիվը որպես շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու միջոց» գաղափարի քարոզում:

2. Խնդիրներն են՝

1) Հեծանվային սպորտի պարապմունքներին բնակչության բավարար ներգրավվածության և առողջ ապրելակերպի բավարար քարոզչության ապահովումը,

2) բնակչության զանգվածային մարզական միջոցառումներին հետագա մասնակցության ապահովումը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցաշարի կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի և մրցավարական հանձնաժողովի կողմից՝ համագործակցելով Հայաստանի հեծանվային մարզաձևերի ֆեդերացիայի, Հեծանվորդների և սիրողական հեծանվասպորտի ֆեդերացիայի և հեծանվային սպորտի մանկապատանեկան օլիմպիական մարզադպրոցի հետ:

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Մրցաշարն անցկացվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում՝ (Շորժա-Սևանա լճի թերակղզի ճանապարհահատված) 2023 թվականի մայիսի 28-ին:

6. Մեկնարկը՝ Շորժա համայնքից՝ ժամը 14:00-ից. մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան մրցումներից երկու ժամ առաջ, անձը հաստատող փաստաթղթերով և բժշկի համապատասխան թույլտվությամբ:

IV. ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Մրցաշարին կարող են մասնակցել ցանկություն ունեցող բոլոր Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիները,

(սիրողական մարզիկներ, դպրոցականներ, ուսանողներ, պետական և մասնավոր ոլորտի աշխատողներ, միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայացուցիչներ, օտարերկրացի զբոսաշրջիկներ, գործող պրոֆեսիոնալ մարզիկները՝ առանձին խմբով), ովքեր չունեն առողջական խնդիրներ: Մրցաշարի ընթացքում առաջացած առողջական խնդիրների դեպքում պատասխանատվությունը կրում է մասնակիցը, համաձայն պայմանագրի (պայմանագրին կարելի է ծանոթանալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջում ՝ https://escs.am/):

8. Մրցաշարի գործող պրոֆեսիոնալ մարզիկների խմբում կարող մասնակցել այն մարզիկները, ովքեր վերջին 5 տարիների ընթացքում մասնակցել են հեծանվային սպորտի ՀՀ և միջազգային առաջնություններին: Պրոֆեսիոնալ մարզիկները կարող են Մրցաշարին մասնակցել ցանկացած տիպի սպորտային հեծանիվով, բացառությամբ էլեկտրական և մոտորային շարժիչներով հեծանիվների:

9. 1-ին և 2-րդ տարիքային խմբի մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան իրենց անձնական հեծանիվներով՝ 1.95 և ավելի չափի անիվներով ու պարտադիր՝ սաղավարտով: Ցանկացած տիպի խճուղային, էլեկտրական և մոտորային շարժիչներով հեծանիվները արգելվում են, ինչպես նաև խճուղային և սպորտային ղեկով հեծանիվի մոդիֆիկացված ցանկացած հեծանիվ, արգելվում է նաև կոնտակտային ոտնակների կիրառումը:

10. Յուրաքանչյուր մասնակից պարտավոր է մեկնարկին (start) և վերջնարկին (finish) ներկայացնել իր հեծանիվը՝ տեխնիկական զննում իրականացնող հանձնաժողովին:

11. Մասնակիցների կողմից մրցման ընթացքում ցանկացած խախտումների, ընդ որում նաև այլ տրանսպորտային միջոցներից օգտվելու (բռնվելու), ինչպես նաև սույն կանոնակարգի 9-րդ և 10-րդ կետերը խախտելու դեպքում, մասնակիցը կորակազրկվի և իրավունք չի ունենա մասնակցելու այս մրցաշարին առաջիկա երեք տարիներին:

12. Մրցաշարը կանցկացվի 2 տարիքային և գործող պրոֆեսիոնալ մարզիկների խմբերով, 1 փուլով՝

1) 1-ին տարիքային խումբ՝ 18-ից 40 տարեկան (1983-2005 թթ. ծնված) կանայք և տղամարդիկ,

2) 2-րդ տարիքային խումբ՝ 41 և բարձր տարիքի (1982 թ. ծնված) կանայք և տղամարդիկ:

3) Գործող պրոֆեսիոնալ մարզիկների խումբ՝ տարիքային սահմանափակում չկա (տղամարդիկ և կանայք):

13. Մրցաշարը նախատեսված է անցկացնել մեկ փուլով՝ Շորժայից դեպի Սևանի թերակղզի (տարածքը՝ 40 կմ):

14. Մրցաշարի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը:

15. Պահանջվող պայմաններին չհամապատասխանող մասնակիցների մասնակցությունը Մրցաշարին չի թույլատրվելու:

VI. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

16. Մրցաշարին երկու տարիքային և գործող պրոֆեսիոնալ մարզիկներ խմբերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցները (տղամարդիկ և կանայք) պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով, իսկ 1-ից 10-րդ տեղեր գրաված մասնակիցները՝ դրամական մրցանակներով, հուշանվերով պարգևատրվում են նաև ամենատարեց մասնակիցները (կին, տղամարդ):

17. Մրցաշարի բոլոր մասնակիցներին տրվում է մարզաշապիկներ,մասնակցության համարներ և հավաստագրեր:

Արդյունքները ամփոփվում են մրցումների ավարտից անմիջապես հետո:

VII. ԾԱԽՍԵՐԸ

18. Մրցաշարի անցկացման հետ կապված ծախսերը՝ մրցումների անցկացման համար, մրցավարներին և կամավորներին սննդի գումար և ճանապարհածախս, մարզահագուստ (մարզաշապիկ, գլխարկ), մրցավարների պարգևավճար, մրցանակակիրներին՝ գավաթներ, մեդալներ, հավաստագրեր, շնորհակալագրեր, մարզաշապիկներ, մասնակցության համարներ, դրամական մրցանակներ երկու տարիքային և գործող պրոֆեսիոնալ մարզիկների խմբերի 1-ից 10-րդ տեղեր գրաված մասնակիցներին՝ 1-ին տեղ՝ 1.000.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 500.000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 300.000 ՀՀ դրամ, 4-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ, 5-10-րդ տեղերը՝ 50.000-ական ՀՀ դրամ, հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն, ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

Հուշանվերներ՝ պատվավոր հյուրերին և կազմակերպչական, շարժական բեմի, ռադիոհանգույցի վարձակալում, կաշվե թղթապանակներ, ծաղկեփնջեր, հրավառություն, մասնակիցներին տեղում ընդմիջման ժամանակ սնունդ, հաղորդավարի ծառայություն, գովազդային նյութերի պատրաստում, նկարահանում, ուղիղ եթերի ապահովում, մրցավայրի ձևավորում, տրանսպորտային միջոցների ապահովում, բեռնատար ավտոմեքենաներ՝ մարզագույքը տեղափոխելու համար և գրենական պիտույքների ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

19. Մասնակիցների գործուղման ծախսերը (գիշերակաց, սնունդ և ճանապարհածախսը) հոգում է գործուղող կազմակերպությունը:

VIII. ՀԱՅՏԵՐԸ

20. Մրցաշարին մասնակցության համար ներկայացվում է հայտ՝ համաձայն հավելված 2-ի, անձնագրի կամ նույնականացման վկայականի և Մրցաշարին մասնակցելու համար առողջության վերաբերյալ տեղեկանքի պատճենները: Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչություն մինչև 2023 թվականի մայիսի 25-ը ներառյալ (էլ. հասցե՝ sergey.abrahamyan@escs.am): Հարցերի դեպքում զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ (010) 59-96-33, (010) 59-96-32: Մասնագիտական հարցերի դեպքում զանգահարել (077) 85-81-08, տեխնիկական հարցերի համար՝ (096) 56-60-01 երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00:

Հավելված № 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի Դեկտեմբերի 29-ի
№ 2190 -Ա/2 հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ
2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱՁՔԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՅՏԻ

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվը	Անձնագիր (սերիա, համար)	Բնակության վայրը, հասցեն	Հեռախոսի համար
1.					